

Հաշվարկային խնդիրներ (Տեքստային խնդիրներ թվային կախվածության վերաբերյալ)

1. Ամենամեծ միանիշ թվին քանի՞ անգամ պետք է գումարել ամենամեծ երկնիշ թիվը, որպեսզի ստացվի ամենամեծ եռանիշ թիվը:
10
2. 37 թվին ձախից կցագրել են 3 թվանշանը: Ինչքանո՞վ մեծացավ թիվը:
300 ով
3. Եռանիշ թվի տասնյակների կարգում գրված է 0 թվանանը: Գտե՛ք այդ թիվը, եթե այն բաժանվում է 9-ի և գրառումը ավարտվում է 9 թվանշանով:
909
4. Տրված 32 թվին աջից կցագրել 5, ձախից՝ 3, ստացված թիվը կրկնապատկել: Բնութագրել ստացված թիվը:
6650
5. 90 թվին աջից կցագրել 0, ձախից 8, ստացված թվից հանել տրված թիվը: Բնութագրել ստացված թիվը:
8810
6. Կազմել եռանիշ թիվ, որը վերջանում է 5-ով, տասնավորը երկուսին բազմապատիկ թիվ է, իսկ հարյուրավորը 3-ին բազմապատիկ թիվ, քանի այդպիսի եռանիշ թիվ կա:
12 հատ
7. Որքա՞ն կմեծանա քառանիշ թիվը, եթե նրա գրությանը ձախից կցագրենք 4 թվանշանը:
40000
8. Հաշվիր բոլոր երկնիշ թվերի քանակը:
90 հատ

9. Հաշվիր բոլոր քառանիշ թվերի քանակը:
9000

10. Որքանո՞վ կմեծանա թիվը, եթե նրա գրությանը հարյուրյակների կարգում գրված 4 թվանշանը փոխարինվի 7-ով:
700

11. Հաշվի՛ր 7,2,0,4 թվանշաններով գրվող ամենամեծ ու ամենափոքր թվերի տարբերությունը:
5373

12. Գտի՛ր ամենամեծ եռանիշ ու ամենափոքր քառանիշ թվերի գումարից 2-ով մեծ թիվ:
2001

13. Երկնիշ թվերից քանիսի՞նք միավորն է 7:
9

14. Երկնիշ թվերից քանիսի՞նք տասնավորը 6
10